

ԳՐԱՄԱՔ

* *



ս տեսայ, ինչպէս մի խոր նկուղում
Հոգիվարքի մեջ ծերուկն էր մեռնում;
Իր որդիներից լըբրուած, մոռացուած,
Մէկին որհնում հայեացքով մարած.
Վերջին վայրկեանին շոթերով զեղնած
Շըշնջում էր նա ինչ որ մի անուն...
Միշտ ապրեց մենակ եւ մահւան ժամին
Փակող շունեցաւ աշքերը նիբնուն.
Ընդ միշտ հեռացաւ աշխարհը մթին
Հանդերձեալ կեսարի խաւարին բաժին
Զապւած թախիծի արցունքը աշքին...

Տեսայ ես կուկին թշւառ զիւղացուն
Իր ցանած, ջրած արտում ուկեղոյն
Կանգնած զիսիկոր՝ կարկտահար արտում...
Առատ արցունքներ նա չէր հոսեցնում
Անսպասելի շարիքի դիմաց:
Մոռայլ դաժան էր հայեացքը լքւած,
Ու լուռ կանգնած էր նա անկարեկից
Կորացած ծանր, անել կարիքից...

Տեսայ թէ ինչպէս մայրը իր մեռած
Որդուն ճամբում էր դէպի զերեզման.
Ինչպէս տաճարում վշտից քարացած,
Էլ ուժ շունէր նա աղօթքի, սզման...
Մինչեւ վերջանար ծէսը յուղարկման
Նա ուշքը կորցրեց... Դագալը տաքան...
Վերջին ծիզերով ուժը հաւաքած
Հազիւ հասաւ նա թանկագին շիրմին
Եւ որդուն քցեց մի բուռ հող վնոշին...

Տեսայ ես նոյնպէս անարեւ քանտից,
Դէպի անապատ, լուսամհւտներից
Նոր խոների մէջ, յոյսը սպառուած,
Նայում էր մի խումը՝ աշբ չուր կորած:
Եւ ես լսեցի՝ ննշպէս խաւարում՝
Մէկի ժանտ շղթան զնզում էր, ննշում:
Ու նոցա դժգոյն դէմքը տարօրէն
Լցւում էր այրող ցաւ ու կոկիծով.
Ես մէկ անզամից հասկացայ արդէն—
Բանտարկեալները ահա տարուած են
Ազատ օրերի սրբազն տենչով:

Տեսայ ես նաեւ քաղցած ու դողդոջ
Ճերուկը թշուառ պմնուած տիկնոջ
Չեռքը կարկանց, քաժինն ստացաւ.
Բայց լաւ դիտելով նազելի կնոջ
Ժապուն չ'հանեց—կանզնեց—քարացաւ...
Եւ ահա համբ տանջանքը անցաւ.
Հեռու շարտեց ծերուկը թշուառ
Ստացած փողը դառն, արտաւաճար—
Հոմննիների սիրոյ առարկայ
Պմնուած տիկինը աղջիկն էր նրա:

Ես այս թոլորը տեսայ, դիտեցի
Երբ խոր թախիծը տիրեց իմ հոգուն,
Երբ մի անորոշ նման կոկիծի
Ափսոսանք կար իմ սրտի ծալքերում՝
Եւ դէսի մէկը դառն աղերսանքով
Նորից նոր հոգիս տենչում էր, ճգտում...
Տեսայ թոլորը, հասկացայ արդէն
Որ իմ թախիծը ցանկութեամբ լցուած
Այս թոլոր ծանր տանջանքների դէմ
Ոչինչ է եւ ցած...

Ուսւ. թարգմ. Ա. Կորնթինսկից
Ե. Ս.